ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0060/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 հունվարի 2024թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր՝ Գ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան),

քննարկելով ըստ հայցի «ԿԱՌԻՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Ընկերության անունից ներկայացվել է հայցադիմում, որը 05.01.2024թ. մակագրվել է Դատարանին: Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, Դատարանին է հանձնվել 10.01.2024թ.:

(1) Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

(2) Օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից պետք է պահանջել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ապացույցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ և 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարությունից պահանջել սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, դատարան ներկայացնել թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-[illegible]» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա է բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ